


QLR PURPLE L PURPLE

Q4 Q29 Q45 GPC



2011-00

СОВЕТ  
СОЮЗ

О. И. БУРДЫ

1954 г.

ФИЛОСОФІЯ ФІЛОЗОФІЇ

Історія філософії

Історія філософії

Історія філософії

Історія філософії

Історія філософії  
Історія філософії філософії філософії філософії філософії філософії філософії філософії

2011-07

892.715  
Q-31

Ա. Լ. Ի Բ Ա. Բ Ա. Ն  
ՅԵՎ 364  
ՔԱՌԱՍՈՒՆ ԱՎԱԶԱԿՆԵՐԸ

ԲՀ

ԱՐԱԲԱԿԱՆ ՀԵՔՑԱԹ

Թուս. քարզմ. Տ. ԽՈՉԱՅԱՆ

Նկարները Լ. Ֆեթնբերդի

270  
P.S.

ՊԵՏՀՐԱՍ  
ՀՀԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՄԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938



Շատ վաղուց, մի ժամանակ, պարսկական մի քաղաքում ապրում եին յերկու յեղբայր՝ Ղասիմը և Ալի-Բաբան։ Յերբ նրանց հայրը մեռավ, նրանք բաժանեցին նրա թողած դրամը, և Ղասիմն սկսեց շուկայում թանկագին գործվածքներ ու մետաքսե խալաթներ վաճառել։ Նա կարողանում եր գովել իր ապրանքը և գնորդներ հրապուրել, և նրա խանութում միշտ մեծ բազմություն եր հավաքվում։ Ղասիմն ավելի ու ավելի յեր հարստանում և յերբ շատ դրամ կուտակեց, ամուսնացավ գլխավոր դատավորի աղջկա հետ, վորէ անունը Թաթմա յեր։

Իսկ Ալի-Բաբան առետուր անել ու դրամ վաստակել չեր կարողանում և ամուսնացած եր Զեյնաբ անունով մի չքավոր աղջկա հետ։ Նրանք շուտով ծախսեցին գրեթե այն բոլորը, ինչ ունեյին և մի անգամ Զեյնաբըն ասաց։

— Լսիր, Ալի-Բաբա, շուտով մենք ուտելու վոշինչ չենք ունենա։ Դու պետք ե մի բան մտածես, թե չե մենք քաղցից կմեռնենք։

— Ղավ, — պատասխանեց Ալի-Բաբան, — յես կմտածէմ, թե ինչ անենք։

Նա դուրս յեկավ պարտեզ, նստեց ծառի տակ և  
սկսեց մտածել: Յերկար մտածեց Ալի-Բաբան և, վեր-  
ջապես, ճարը գտավ: Նա վերցրեց իր մոտ մնացած  
դրամը, գնաց շուկա և գնեց յերկու եշ, Ֆի կացին և  
մի պարան:

Իսկ մյուս առավոտը գնաց քաղաքից դուրս գտնը-  
վող խիտ անտառով պատած բարձր սարը և ամբողջ  
որը փայտ եր կտրում: Յերեկոյան Ալի-Բաբան փայտը  
կապեց, բարձեց իր եշերին և վերադարձավ քաղաք:  
Նա շուկայում փայտը վաճառեց և գնեց հաց, միս ու  
կանաչեղեն:

Այդ որվանից ամեն առավոտ Ալի-Բաբան գնում՝  
եր սարը, մինչև յերեկո փայտ եր կտրում, ապա շու-  
կայում վաճառում և իր ու Զեյնարի համար գնում եր  
հաց ու միս: Յեկ ահա մի անդամ նա կանգնած եր մի  
բարձր ծառի տակ, պատրաստվում եր կտրելու, հան-  
կարծ նկատեց, վոր ճանապարհի վրա փոշի բարձրա-  
ցավ մինչև յերկինք: Իսկ յերբ փոշին ցըվեց, Ալի-Բա-  
բան տեսավ, վոր ուղիղ դեպի իրեն և արշավում զրահ-  
ներ հագած ձիավորների մի ջոկատ, նրանց թամբերին  
նիզակներ եյին կապված, իսկ գոտիներում փայլում  
եյին յերկար սուր թրեր: Առջևից, բարձր, սպիտակ  
ձիով արշավում եր սև մորուքով միաչքանի մի մարդ:

Ալի-Բաբան շատ վախեցավ: Նա արագ բարձրա-  
ցավ ծառի կատարը և թագնվեց ճյուղերի մեջ: Իսկ  
ձիավորները մոտեցան այն տեղին, վորտեղ նա հենց  
նոր կանգնած եր և իջան ցած: Նրանցից ամեն մեկը  
թամբից արձակեց մի ծանր պարկ և շալակեց, պատա-  
նրանք շարք կանգնեցին, սպասելով, թե ինչ կհրա-  
մայի միաչքանին՝ իրենց առաջնորդը:

«Այս ի՞նչ մարդիկ են և ի՞նչ կա նրանց պարկերի  
մեջ՝ մտածեց Ալի-Բաբան:— Հավանորեն որանք գո-  
ղեր և ավազակներ են»:

Նա հաշվեց մարդկանց և դուրս յեկավ, վոր նրանք  
ուղիղ քառասուն հոգի յեն, բացի առաջնորդից: Ա-  
ռաջնորդը անցավ իր մարդկանց դլուխը և առաջնոր-

դեց նրանց դեպի բարձր ժայռը, վոր պողպատից փոք-  
րիկ դուռ ուներ: Նա այնպես եր պատերով և  
փշերով, վոր գրեթե չեր յերեսում: Առաջնորդը կանգ-  
նեց դռան առաջ և բարձր բացականչեց.

— Սիմսիմ\*), դուռը բաց:

Յեկ հանկարծ ժայռի դուռը բացվեց, առաջնորդը  
ներս մտավ, իսկ նրա հետեւից ներս մտան նրա մարդիկ  
և դուռը նորից նրանց հետեւից փակվեց: «Այ քեզ հը-  
րաշք — մտածեց Ալի-Բաբան:— Սիմսիմը հո փոքրիկ  
բույս ե: Յես գիտեմ, վոր նրանից յուղ են հանում,  
բայց յես չգիտեյի, վոր նա կարող ե դուռը բացել:

Ալի-Բաբան մեծ ցանկություն զգաց մոտիկից նա-  
յելու կախարդական դռանը, բայց ավազակներից նա  
այնպես եր վախենում, վոր չհամարձակվեց ծառից իջ-  
նել:

Անցավ մի փոքր ժամանակ և հանկարծ դուռը  
բացվեց ու քառասուն ավազակները դուռս յեկան դա-  
տարկ պարկերով: Միաչքանի առաջնորդը գնում եր  
առաջից: Ավազակները թամբերին կապեցին դատարկ  
պարկերը, հեծան ձիերը և հեռացան:

Այն ժամանակ Ալի-Բաբան, վոր ծառի վրա կուչ  
յեկած նստելուց արդեն հոգնել եր, շտապով ցած իջավ  
և վազեց դեպի ժայռը: «Իսկ ի՞նչ կլինի, յեթե յես ել  
ասեմ՝ Սիմսիմ, դուռը բաց, — մտածեց նա: Դուռը  
կբացվի՞ արդյոք: Փորձեմ»:

Նա զինվեց արիությամբ, լիաթոք ող ներշնչեց և  
բարձրածայն կանչեց.

— Սիմսիմ, դուռը բաց:

Յեկ իսկույն դուռը հետ գնաց նրա առջև ու բաց-  
վեց մի մեծ քարայրի մուտք: Ալի-Բաբան ներս մտավ  
և հենց նա անցավ շեմքից, դուռը նորից նրա յետեւից  
փակվեց: Ալի-Բաբան մի քիչ սարսափ զգաց: Իսկ յեթե  
հանկարծ դուռը չբացվի և չկարողանա դուրս գա՞լ:

\*.) Սիմսիմը մի տեսակ բույս է, վորի սերմերից յուղ են  
հանում:

Այնուամենայնիվ նա առաջ դնաց, զարմանքով նայելով չորս կողմը:

Նա տեսավ, վոր ինքը գտնվում է մի մեծ սենյակում, վորի պատերի մոտ դրված են բազմաթիվ փոքրիկ սեղաններ, վրաները՝ վոսկե ափսեներ արծաթե կափարիչներով։ Ալի-Բաբան կերակրի անուշ հոտ զգաց և հիշեց, վոր առավոտվանից վոչինչ չի կերել։ Նա մոտեցավ սեղաններից մեկին, վերցրեց ափսեների կափարիչները և նրա բերանի ջուրը դնաց։ Ինչ ուտելիքներ կուզես ափսեների մեջ կային. տապակած հավեր, փլավ, մուրալով թխվածքներ, հարմա, խնձորներ, և ուրիշ շատ տեսակ համեղ ուտելիքներ։

Ալի-Բաբան հափշտակեց հավը և մի ակնթարթում կերավ։ Հետո ուզեց փլավ ուտել և այն ել վերջացնելով հալվա վերցրեց, բայց այլևս վոչ մի կտոր չկառողացավ ուտել, այն աստիճան կշտացել եր։ Հանգստանալով միքիչ, նա նայեց չուրջը և մի մուտք նկատեց դեպի մյուս սենյակը։ Ալի-Բաբան մտավ այնտեղ և աչքերը կլոցեց։ Այնքան շատ վոսկի և թանգարժեք իրեր կային այնտեղ, վոր ամբողջ սենյակը փայլում ու չողջողում եր։ Վոսկի դինարները և արծաթե գիրխամները\*) կույտերով թափված եյին, ուղղակի դետնին, ինչպես խիճը ծովափին։ Թանկագին ամանները՝ դավաթներ, մատուցարաններ, ափսեներ՝ նախշված թանկագին քարերով՝ դրված եյին բոլոր անկյուններում։ Չինական, չնդկական, յեգիպտական մետաքսի և գործվածքների հակերն ընկած եյին սենյակի մեջ։ Պատերին կախված եյին սուր թրեր և յերկար նիզակներ, վորը կբափականանար ամբողջ մի բանակի։

Ալի-Բաբայի աչքերը շլացան և նա չդիտեր ինչից սկսել։ Մեկ մետաքսե կարմիր խալաթն եր փորձում, մեկ վերցնում եր վոսկե մատուցարանը և նայում մեջ հայելու պես, մեկ մի ափ դրամ եր վերցնում և ա-

\*) Դինարը մոտավորապես հինգ ոռութու հավասար դրամ է ո գիրեխմը գինաբարի քաներորդ մասն։



Ալի-Բաբայի աչքերը շլացան . . .

պար դցում։ Վերջապես նա մի քիչ հանգստացավ և առաց ինքն իրեն։ — Այս դրամը և թանկարժեք իրերը, հավանորեն, կողոպտված են և այստեղ են բերել հենց նոր այստեղ յեղած այլազակները։ Այս հարստությունը նրանց ե պատկանում և յեթե յես ինձ համար վոսկի վերջնեմ, դրանով վոչ մի վատ բան չի լինի։ Վոսկին այստեղ այնքան շատ ե, վոր անհնար ե հաշվել։ Ալի-Բաբան հավաքեց խալաթի փեշերը և չոքելով սկսեց վոսկի հավաքել։ Նա քարայրում յերկու դատարկ պարկ դտավ, լցրեց դինարներով, քարչ տրվեց դռան մոտ և կանչեց։

— Սիմոն, դուռը բաց։ Դուռն անմիջապես բացվեց։ Ալի-Բաբան դուրս յեկավ քարայրից և դուռը նրա հետեւց փակվեց։ Փչիչոտ թփերն ու ճյուղերը միահայութեցին ու ծածկեցին դուռը։ Ալի-Բաբայի եշերն արածում եյին բացատում։ Ալի-Բաբան վոսկով պարկերը բեռնեց նրանց, ծածկեց փայտերով և գնաց տուն։ Յերբ նա տուն դարձավ, արդեն գիշեր եր և Զեյնարը դարպասի մոտ անհանգիստ նրան եր սպասում։

— Անտառում այսքան ժամանակ ի՞նչ եյիր անում, — հարցրեց նա։ — Յես արդեն մտածում եյի, թե գայլերը քեզ հռչուել են։

— Զեյնար, հիմա բոլորը կիմանաս — ասաց Ալի-Բաբան։ Ողնիր այս պարկերը ներս տանելու և մի աղմբկիր, վորպեսզի հարեւանները մեզ չլսեն։

Զեյնարը լուռ ու մունջ պարկերից մեկը շալակեց և նրանք միասին տուն մտան։ Զեյնարը հետեւց դուռն ամուռ փակեց, վառեց լույսը և բացեց պարկը։ Վոսկին տեսնելով, նա վախից գունատվեց և բացականչեց։

— Ի՞նչ ես արել, Ալի-Բաբա, այս ո՞ւմ ես կողոպտել։

— Մի՛ անհանգստանա, Զեյնար, — ասաց Ալի-Բաբան։ — յես վոչ վոքի չեմ կողոպտել և հիմա քեզ կրպատմեմ, թե այսոր ինձ հետ ինչ ե պատահել։

Նա պատմեց ավազակների ու քարայրի մասին և վերջացնելով իր պատմությունը՝ ասաց.

— Տես, Զեյնար, թագցրու այդ վոսկին և դրա մասին վոչ վոքի չասես։ Մարդեկ կմտածեն, թե մենք իրոք վորեւ մեկին կողոպտել ենք և մեր մասին կը հայտնեն սուլթանին, այն ժամանակ նա կսլի մեզնից բոլոր վոսկիները, մեզ զնդանը կնետի։ Յեկ փոս փորենք և վոսկին թագցնենք այնտեղ։

Նրանք դուռը յեկան պարտեղ, լուսնյակի լույսով փոս փորեցին, վոսկին մեջը դրին, ապա նորից փոսը ծածկեցին հողով։ Վերջացնելով այդ գործը, Ալի-Բաբան պառկեց քնելու, Զեյնարը նույնպես պառկեց, բայց նա յերկար ժամանակ չուռ ու մուռ եր գալիս և մտածում՝ «Բայց Ալի-Բաբան ինչքա՞ն վոսկի յե բերել։ Հենց վոր լուսացավ, բոլոր փողերը կհաշվեմ մինչև վերջինը»։

Մյուս առավոտը, յերբ Ալի-Բաբան, ամեն որպա պես գնաց սար, Զեյնարը վազեց փոսի մոտ, բացեց և սկսեց հաշվել ընարները։ Սակայն վոսկին այնքան շատ եր, վոր Զեյնարը չկարողացավ հաշվել—վերջացնել։ Նա այնքան ել լավ չեր համարում և շարունակ ոխալիում եր։ Վերջապես այդ նրան ձանձրացրեց և նա ասաց.

— Ավելի լավ ե, վերցնեմ կոտը և նրանով չափեմ վոսկին։ Միայն կոտ չունեմ։ Պետք է ֆաթմայից խնդրել։

Իսկ Զամիմը ֆաթմայի հետ ապրում եր հարեւան տանը։ Զեյնարն անմիջապես վազեց նրանց մոտ։ Ներս մտավ միջանցքը և ֆաթմային ասաց.

— Բարի յեղիր և կարճ ժամանակով տուր ինձ քո կոտը։ Յես հենց այսոր կվերադարձնեմ։

— Լավ, — ասաց ֆաթման։ Միայն թե կոտը հարեւանի մոտ ե։ Հիմա կզնամ և կբերեմ։ Այստեղ միջանցքում սպասիր, քո վոտները կեղտու են, իսկ յես նոր եմ մաքուր խսիրներ փոել։

Այդ բոլորը ֆաթման հնարեց։ Թե՛ ձավարի կոտն

Եր իր տեղը՝ խոհանոցում ոճախի վերել կախված և թե տասը որ եր, ինչ նա չեր փոխել խսիրները։ Իրապես նա շատ եր ուզում իմանալ, թե ինչու հանկարծ Զեյնաբին կոտ հարկավորվեց, չե վոր ֆաթմային հայտնի յեր, վոր փաղուց Ալի-Բաբայի տանը ձավար չկար։ Իսկ հարցնել Զեյնաբից նա չեր ուզում։ «Թո՛ղ Զեյնաբը չերեակայի, թե Ֆաթման իր գործերով հետաքըրքում ե»։ Յեվ նա առանց հարցնելու՝ իմանալու միջոց հնարեց։ Ֆաթման կոտի հատակին մեղր քսեց, ապա բերելով Զեյնաբին՝ ասաց.

— Ահա, վերցրու, միայն տես, չմոռանաս վերադաբնել ինձ մինչև արել մայր մտնելը։ Հարկավոր ե, վոսպ պետք ե չափեմ։

— Ծնորհակալություն, Ֆաթմա, — ասաց Զեյնաբը և վաղեց տուն։ Նա փոսից դուրս հանեց բոյր վոսկիները և սկսեց շտապով չափել, շարունակ յերկյուղով չորս կողմը նայելով։

Վոսկին տասը և կես կոտ դուրս յեկավ։ Զեյնաբը վերադաբնեց կոտը ֆաթմային և հեռացավ խոնարհ վողջունելով։ Ֆաթման իսկույն վերցրեց կոտը ու նայեց մեջ։ Յեվ հանկարծ տեսավ, վոր կոտի հատակին ինչ վոր փոքրիկ փայլուն, կլորիկ բան ե կպած։ Ֆաթման ձեռքը կոտի մեջ տարավ և հանեց այդ բանը։ Դա մի նոր վոսկե դինար եր։

Ֆաթման իր աչքերին չեր հավատում։ Նա մատների մեջ շուռ ու մուռ տվեց դրամը, նույնիսկ փորձեց ատամներով՝ արդյո՞ք կեղծ չե։ Բայց դինարն իսկական եր, մաքուր վոսկուց։

— Ահա թե այդ ինչ ձավար ե յեղել, — բացականչեց Ֆաթման։ Տեսեք, նրանք այնքան հարուստ են, վոր Զեյնաբը նույնիսկ վոսկին կոտով ե չափում։ Հավանորեն նրանք վորեւ մեկին կողոպտել են, իսկ իրենք չքավոր են ձեանում։ Մի շուտ Ղասիմը խանութից վերադառնար։ Յես անպայման բոլորը նրան կրպատմեմ։ Թող գնա Ալի-Բաբայի մոտ և նրան մի լավ

սպառնալիք տա։ Հավանորեն Ալի-Բաբան նրան բաժին կտա։

Ֆաթման ամբողջ որը նստեց դարպասի մօտ, ըսպասելով Ղասիմին։ Յերբ սկսեց մթնել, Ղասիմը խսնութից վերադարձավ և ֆաթման նույնիսկ թույլ տվեց չալման արձակելու՝ բղավեց.

— Լսիր, Ղասիմ, նորություններ ունեմ։ Քո յեղբայր Ալի-Բաբան իրեն աղքատ ե ձեացնում, բայց դուքս ե դալիս, վոր նա մեզնից հարուստ ե։

— Ինչե՞ր ես հնարում—բարկացավ Ղասիմը։ Մեր փողոցում ինձնից հարուստը չկա, նույնիսկ մեր ամբողջ թաղում։ Իզուր չեն ինձ շուկայի ավագ ընտրել։

— Դու ինձ չե՞ս հավատում, — վիրավորվեց Ֆաթման։ Այդ զեպքում ասա, դու ի՞նչպես ես փողը հաշվում, յերբ յերեկոյան ստուգում ես վաստակածդ։

— Սովորականի պես, — պատասխանեց Ղասիմը։ Դինարը և դիրեխեմները կույտ-կույտ եմ անում և հաշվում։ Իսկ յերբ հարյուրը համարում եմ՝ մատուցալում եմ, վորպեսզի չսխալվեմ։ Բայց ինչո՞ւ յես դու այդպիսի հիմարություններ հարցնում։

— Վո՛չ, հիմարություն չե, — բացականչեց Ֆաթման։ — Այ, դու դինարները տասնյակներով և հարյուրով ես հաշվում, իսկ Զեյնաբը՝ քո յեղբոր կինը՝ կոտով։ Ահա տես թե նա ինչ ե թողել կոտի մեջ։

Յեվ Ֆաթման նրան ցույց տվեց կոտի մեջ զտած դինարը։

Ղասիմը դրամը դիտեց բոլոր կողմերից և ասաց.

— Յես Ղասիմը չլինեմ, յեթե չիմանամ, թե Ալի-Բաբային վորտեղից են այդ դրամները։ Խորաման-կությամբ, թե ուժով՝ բայց այդ բոլորը յես նրանից կիսեմ։

Յեվ նա իսկույն գնաց յեղբոր մոտ։ Ալի-Բաբան զենց նոր եր վերադարձել սարից և տան առջեւ քարենատարանին հանգստանում եր։ Նա Ղասիմին տեսնելով շատ ու բախացավ և ասաց.

— Բարով յեկար, Ղասիմ։ Դու ուշ—ուշ ես լինում  
ինձ մոտ։ Այսոր այդ ինչն ե քեզ բերել ինձ մոտ, այն  
ել այսպես տարածւմ։

— Բարի յերեկո, իմ յեղբայր— հանդիսավորու-  
թյամբ ասաց Ղասիմը։ Ինձ հասցրված մի մեծ վիրա-  
վորանքն ե ինձ բերել քեզ մոտ։

— Վերավորա՞նք— զարմացավ Ալի-Բաբան։ Ին-  
չո՞վ կարող եր չքավոր փայտահատը վիրավորել շու-  
կայի ավագին։

— Դու այժմ ինձնից հարուստ ես, — ասաց Ղասի-  
մը, — դու վոսկին կոտով ես չափում։ Ահա թե կիսս ինչ  
ե գտել այն կոտի մեջ, վոր տվել ե քո կնոջը՝ Զեյնա-  
քին։ Մի փորձիր խարելու ինձ, յես բոլորը գիտեմ։  
Ինչո՞ւ յես դու ինձնից թագցրել քո հարստանալը։ Յե-  
քենի վորեն մեկին կողոպտել ես։

Ալի-Բաբան տեսավ, վոր Ղասիմը գիտե իր  
դադանիքը և վորոշեց ամեն ինչ խոստովանել։

— Ո՛, իմ յեղբայր— ասաց նա. յես բոլորովին  
ցանկություն չեմ ունեցել քեզ խարելու։ Յես քեզ այդ  
մասին չեմ պատմել այն պատճառով, վոր վախեցել եմ  
գողերից և ավագակներից, վորոնք կարող են քեզ  
սպանել։

Յեվ նա պատմեց քարայրի ու ավագակների մասին  
և ապա ձեռքը մեկնելով յեղբորը՝ ասաց.

— Ո՛, իմ յեղբայր, մենք մի հոր և մի մոր զավակ  
ենք։ Յեկ բաժանենք կիսովի այն բոլորը, ինչ յես կը-  
բերեմ քարայրից։ Յես գիտեմ ինչպես մտնել այնտեղ  
և ինչպես պահպել ավագակներից։ Վերցրու դրամի և  
թանկադին իրերի կեսը— դրանք քեզ կրավականանան  
մինչև մահդ։

— Կեսը չեմ ուղում, յես բոլոր դրամն եմ ու-  
ղում, — պոռաց Ղասիմը, դեն հրելով Ալի-Բաբայի ձեռ-  
քը։ Շուտ ասա, թե ինչպես մտնել քարայր, իսկ յեթե  
չասես, այն ժամանակ կհայտնեմ սուլթանին, նա  
կը բամայի քեզ դվաստել։

— Ի՞նչ ես սուլթանով սպառնում, — ասաց Ալի-

Բաբան։ յեթե ուղում ես, դնա քարայր, բայց միե-  
նույն ե, դու չես կարող բերել բոլոր դրամները և  
գանձերը։ Նույնիսկ յեթե գիշեր—ցերեկ, ամբողջ մի  
տարի, անդադար քարայրից վոսկի և արծաթ կրես,  
ելի դուրս չես կարող հանել կեսն այն բոլորի, ինչ կա-  
տանակ։

Նա պատմեց Ղասիմին, թե ինչպէս պիտի գանի  
քարայրը և կարգադրեց լավ Հիշել՝ «Սիմսիմ, դուռը  
բաց» խոսքերը։

— Զեմ մոռանալ, — ասաց Ղասիմը։ Սիմսիմ . . .  
Սիմսիմ . . . Այդ կարծեմ կանեփի նման բույս ե, կհի-  
շեմ։

Մյուս առավոտը, Ղասիմը տասը ջորի փալանեց  
և ամեն ջորու վրա դրավ յերկու հատ մեծ սնդուկ ու  
ձանապարհ ընկավ գեպի անտառ։ Նա ջորիներին ար-  
ձակեց անտառի յեղերքին, վոր արածեն, ինքը գտավ  
քարայրի դուռը և նրա առաջ կանգնելով, ամբողջ ու-  
ժով բղավեց։

— Ե՛յ, Սիմսիմ, դուռը բա՛ց։

Դուռը բացվեց, Ղասիմը ներս մտավ և դուռը  
նորից նրա հետեւից փակվեց։

Ղասիմը տեսավ գանձերով լիքը քարայրը և ուրա-  
խությունից բոլորովին իրեն կորցրեց։ Նա կանգնած  
տեղը պարեց և ապա առաջ նետվեց, սկսեց վերցնել  
այն ամենը, ինչ ձեռքն եր ընկնում՝ թանկագին գործ-  
վածքներ, վոսկու կտորներ, կժեր ու ափսեներ։ Ապա  
դեն եր նետում դրանք և պատերից սրեր ու վահաններ  
պոկում, բռերով վոսկի յեր վերցնում և ածում ծո-  
ցերը։ Այսպես ամբողջ մի ժամ նա քարայրի մեջ դեռ  
ու դեն ընկավ, բայց վոչ մի կերպ չկարողացավ հավա-  
քել այն ամենը, ինչ կար այնտեղ։ Վերջապես նա մտա-  
ծեց, «Ժամանակ շատ ունեմ, պարկերը մեկը մյուսի  
հետեւից այստեղից դուրս կհանեմ, մինչեւ վոր բոլորը  
ջորիներին կբարձեմ, իսկ հետո նորից կդամ։ Յես կդամ  
այստեղ ամեն որ, մինչեւ կտանեմ վերջի դրամը»։

Նա վերցրեց դրամով լի պարկը և քաշ տվեց գեպի

Դուռը: Դուռը փակ եր: Ղասիմը ցանկացավ արտասահնել կախարդական խոսքերը, վորով դուռը բացվում եր, բայց հանկարծ պարզվեց, վոր մոռացել եր այդ բառերը: Նա միայն հիշում եր՝ պետք ե ինչ վոր բույսի անուն տալ: Յեվ նա կանչեց.

— Սիսե՛ռ, դուռը բա՛ց:

Սակայն դուռը չբացվեց: Ղասիմը մի քիչ վախեցավ: Նա մտածեց և նորից կանչեց.

— Ցորե՛ն, դուռը բա՛ց:

Դուռը նույնիսկ չչարժվեց: Ղասիմը յերկյուղից արդեն վոչինչ չկարողացավ հիշել և ոկտեգ թվել իւ զիտցած բոլոր բույսերի անունները:

— Վարսակ, դուռը բա՛ց:

— Կանեփ, դուռը բա՛ց:

— Գարի, դուռը բա՛ց:

Սակայն դուռը չբացվեց: Ղասիմը հառկացավ, վոր ինքն այլևս քարայրից դուրս չի դա: Նա նստեց վոսկով լիքը պարկի վրա և լաց յեղավ: Այդ ժամանակ ավազակները կողոպտել եյին հարուստ վաճառականներ և շատ վոսկի ու թանկագին ապրանք եյին խլել: Նրանք վճռել եյին այդ բոլորը թագցնել քարայրում: Մոտենալով անտառին, առաջնորդը անտառի յեղբին արածող ջորիներ նկատեց:

— Այդ ի՞նչ ջորիներ են,— ասաց առաջնորդը:

Նրանց փալաններին սնդուկներ են բարձված: Հավանուրեն մեկը մեր քարայրի մասին իմացել ե ու դում ե մեղ կողոպտել:

— Սիմսիմ, դուռը բա՛ց:

Դուռը բացվեց և ավազակները տեսան Ղասիմին, վոսկով լիքը պարկին նստած՝ խոր քնի մեջ: Առաջնորդը առաջ նետվեց և Ղասիմի գլուխը թրով թոցրեց:

Ավազակները Ղասիմի դին թողեցին քարայրում, իսկ իրենք ջորիները բռնեցին, առաջ արին և այդտեղից հեռացան:

Իսկ ֆաթման ամբողջ որը նստել եր լուսամուտի մոտ և շարունակ սպասում եր, թէ յերբ պետք ե



Առաջնորդն առաջ նետվեց և Ղասիմի գլուխը թոցրեց...

յերեան ջորիները՝ բեռնված վոսկով լիքը սնդուկներով։ Բայց ժամանակն անցնում էր, իսկ Դասիմը չկար։ Ֆաթման սպասեց ցերեկը, սպասեց գիշերը, իսկ առավոտը լալով վագեց Ալի-Բաբայի մոտ։

Ալի-Բաբան ասաց.

— Մի անհանդստանա, ֆաթմա, հենց հիմա կդնամ սար և կիմանամ, թե ինչ ե պատահել Ղասիմին։

Նա իսկույն նստեց եցը և գնաց անտառ՝ ուղիղ քարայր։ Յեկ հենց ներս մտավ քարայր՝ տեսավ յեղբայրը սպանված, ընկած ե գրամով լիքը պարկերի վրա։

Ալի-Բաբան քարայրից դուրս հանեց Ղասիմի դին, դրավ պարկի մեջ և տխուր գնաց տուն՝ իր մեջ մտածելով։

«Ահա թե աչքածակությունը Ղասիմին ուր հասցրեց։ Յեթե նա համաձայնվեր ինձ հետ զրամը բաժանելու և չցանկանար բոլորն իրեն վերցնել, այժմ կենդանի կլիներ»։

Ալի-Բաբան Ղասիմին շքեղ հանդեսով թաղեց, քայց վոչ վոքի չասաց, թե ինչպես սպանվեց Ղասիմը։ Ֆաթման, Ղասիմին գերեզմանատուն ճանապարհողներին ամենքին ասաց, վոր իր ամուսնուն՝ անտառում վայրենի գաղաններն են հոշոտել։

Յերբ Ղասիմին թաղեցին, Ալի-Բաբան ֆաթմային ասաց.

— Ֆաթմա, գիտես ի՞նչ, արի տունդ ծափսիր ինձ ու ապրենք միտասին։ Այն ժամանակ յես նոր տուն չեմ չինի, քեզ համար ել մենակ ապրելը դժվար կլինի։ Լա՞վ։

— Ո՛, Ալի-Բաբա, — ասաց ֆաթման, թե իմ և թե քո տունը և այն բոլորը, ինչ յես ունեմ, քեզ ե պատկանում։ Միայն թույլ տվեք ապրել ձեզ հետ, մրանից ավել ինձ վոչինչ հարկավոր չե։

— Ա՛յ, այդ չափ ե, — ասաց Ալի-Բաբան և

նրանք՝ Ալի-Բաբան, Զեյնաբը և Ֆաթման ապրեցին միատեղ։

Ալի-Բաբան ելի մի քանի անգամ քարայր գնաց և բերեց շատ վոսկի, թանկագին հաղուստներ, գորգեր և ամաններ։ Յմեն որ նրա խոհանոցում ուտելիք եք պատրաստվում, վոչ միայն իրենց համար, այլև իրենց բոլոր չքավոր հարեանների համար, վորոնք ուտելու վոչինչ չունեյին։ Իսկ յերբ հարեանները նրան շնորհակալություն եյին հայտնում, նա ասում էր.

— Վաղն ել յեկեք և ձեզ հետ բերեք բոլոր չքավորներին։ Իսկ շնորհակալ լինելու կարիք չկա։ Յես ձեզ հյուրասիրում եմ յեղբորս՝ Ղասիմի փողով, նըրան սարում գայլերը հոշոտեցին։ Նա հարուստ մարդ էր։

Շուտով բոլոր չքավորներն ու աղքատները սովորեցին գալ Ալի-Բաբայի տունը՝ ճաշի և ընթրիքի և քաղաքի բնակիչները նրան շատ սիրեցին։

Ահա՝ թե ինչ պատահեց Ալի-Բաբային, Զեյնաբին, և ֆաթմային։

Ինչ վերաբերում ե ավազակներին, ապա միքանի որից հետո նրանք նորից յեկան քարայր և տեսան, վոր իրենց թշնամու գիտակն անհայտացել ե, իսկ պարկերով գրամը գետնին շաղ ե տրված։

— Մեր քարայրը նորից ե մարդ մտել, — պոռաց առաջնորդը։ — Նորես հենց սպանեցի մի թշնամու, քայց դուրս ե գալիս, վոր նրանք շատ են։ Յես Միաշբանի Հասանը չինեմ, յեթե չսպանեմ մեր ավարով ապրողներին։ Քաջ ավազակներ, արդյոք ձեր մեջ կգտնվի՞ մի խիզախը, վորը չի վախենա գնալ քաղաք՝ գտնելու մեզ վիրավորանք հասցնողին։ Ավելի լավ ե այդ գործն իր վրա չառնի վախկառը կամ թույլը։ Միայն խորամանկը և ճարպիկը կիտրողանա կատարել այդ։

— Ո՛, առաջնորդ, — ասաց ավազակներից մեկը՝ ինձնից բացի վոչ վոք չի զնա քաղաք և չի հետեւ թշնամուն։ Իզուր չեն ինձ գլուխ թոցնող Ահմադ ան-



վանում: Իսկ յեթե նրան չգտնեմ, վարդիր ինձ հետ-  
այնպես, ինչպես կուզես:

— Լավ, Ահմադ, —ասաց առաջնորդը: —Քեզ միուր  
ժամանակ եմ տալիս: Յեթե դու դտնես մեր թշնա-  
մուն, քեզ ինձ ողնական կնշանակեմ, իսկ յեթե չգրտ-  
նես՝ ավելի լավ ե չվերադառնաս. դլուխդ կկտրեմ:

— Հանդիստ յեղիր, առաջնորդ, չի անցնի մի որ  
և. դու կիմանաս, թե վորտեղ դտնել թշնամուդ, —ա-  
սաց Հասանը: — Յերեկոյան ինձ այստեղ, անտառում  
սպասեք:

Նա հանեց ավազակի հագուստը, հազար կա-  
պույտ մետաքսէ խալաթ, սաֆյանե կարմիր գույնի  
յերկարածիտ վոտնամաններ, գլխին թաստեկ դրեց ու  
գնաց քաղաք:

Վաղ առավոտ եր. շուկան դեռ դատարկ եր և բո-  
լոր խանութները փակ: Միայն ծերունի մաշկակարն եր  
նստել իր վրանի տակ և դարսելով դործիքները՝ պատ-  
վերատվի յեր սպասում: Գլուխ թոցնող Ահմադը մո-  
տեցավ նրան և վողջուներով ասաց.

— Բարի լույս, քեռի: Ինչ շուտ ես աշխատանքի  
յեկել: Յեթե յես քեզ չտեսնեյի, դեռ յերկար պիտի  
սպասեյի մենչեւ շուկան բացվեր:

— Իսկ ի՞նչ ե հարկավոր քեզ, —հարցրեց ծերու-  
նի մաշկակարը, վորին Մուստաֆա եյին կոչում:

Յես ձեր քաղաքում ոտարական եմ, —պատասխա-  
նեց Ահմադը: —Այս դիշեր յեկա այստեղ և մինչեւ  
լուսարաց սպասեցի քաղաքի դարպանների բացվելուն: Այս քաղաքում ապրում եր իմ հարուստ վաճառական  
յեղբայրը: Յես յեկել եմ հեռու յերկրներից նրան տես-  
նելու և հասնելով քաղաք՝ լսեցի, վոր նրան մահացած  
դտել են անտառում: Այժմ յես չդիտեմ, ինչպես դըտ-  
նեմ նրա ազգականներին, վորպեսզի նրանց հետ միա-  
սին սպամ յեղբորս մահը:

— Դու ասում ես, վոր քո յեղբայրը հարուստ  
վաճառական ե յեղել, —հարցրեց մաշկակարը: —Մեր  
քաղաքում նորերս մի վաճառականի թաղեցին, նրա

թաղմանը յես ել կայի: Առետրականի կինն ասում եղ,  
վոր նրան հոշոտել են դայլերը, բայց մեկից լսեցի,  
վոր դա ճիշտ չե, այլ իրապես այդ մարդուն գտել են  
անտառում գլխատված և գաղտնպողի պարկի մեջ  
տուն են բերել:

Գլուխ թոցնող Ահմադը շատ ուրախացավ: Նա  
գլխի ընկապ, վոր այդ հարուստ վաճառականը հենց  
այն մարդն ե, վորին քարայրում ավազակալետը  
սպանեց:

— Իսկ դու կարո՞ղ ես ցույց տալ նրա տունը, —  
հարցրեց Ահմադը մաշկակարին:

— Կարող եմ, —պատասխանեց մաշկակարը, —  
միայն չգիտեմ վոնց թողնեմ գործն: — Հանկարծ մեկը  
դա շուկա և ուղենա կոշիկներ պատվիրել ու յես այս-  
տեղ չլինեմ:

— Առ քեզ մի դինար, —ասաց Ահմադը, — վերց-  
րու այն քո վնասիդ համար, իսկ յերբ դու ցույց  
կտաս յեղբորս տունը, մի դինար ել կտամ:

— Շնորհակալ եմ առատաձեռնությանդ համար, —  
բայցականչեց Մուստաֆան ուրախացած: — Մեկ դինար  
աշխատելու համար՝ ինձ հարկավոր ե մի ամբողջ  
շաբաթ կոշիկներ կարկատել: Գնա՞նք:

Յեվ մաշկակարն Ահմադին տարավ այն տունը,  
վորտեղ ապրում եր Ղասիմը:

— Ահա այս ե այն տունը, վորտեղ ապրելիս ե յե-  
ղել սպանված վաճառականը: Այժմ այստեղ նրա յեղ-  
բայրն ե ապրում՝ ասաց Մուստաֆան:

«Հենց նա ելինձ հարկավոր ե». մտածեց Ահմադը:  
Նա մի դինար ևս տվեց Մուստաֆային և սա խոնարհ-  
վելով ու շնորհակալությամբ դնաց:

Այդ քաղաքում բոլոր տները շրջապատված  
եյին բարձր պարիսպներով, այնպես վոր փողոցից  
միայն զուռն եր յերեւամ: Իսկ հիշողության մեջ պա-  
հել անծանթ տունն այնքան ել հեշտ չեր:

— Այս տունը հարկավոր ե նշան անել, վորպեսզի

Հետո կարելի լինի ճանաչել, — ինքն իրեն ասաց Ահմադը:

Նա գրպանից հանեց մի կտոր կավիճ և տան դրուան վրա խաչաձև նշան արեց, ապա հետ գնաց և ուրախացած ինքն իրեն ասաց.

— Այժմ յես կհիշեմ այդ տունը և վաղը ընկերներիս կրերեմ այստեղ: Անպայման յես կլինեմ առաջ նորդի ոգնական:

Ահմադը հենց նոր եր հեռբ տնից դուրս յեկավ Ալի-Բարայի տան ծառայող կինը՝ Մարջանան՝ շատ խելոք և քաջասիրտ մի աղջիկ: Նա պատրաստվում եր գնալ շուկա՝ հաց և միս գնելու ճաշի համար: Ծածկելով դարպասի դուռը՝ նա շրջվեց և հանկարծ դարպասի վրա կավիճով նկարված խաչ տոնակալ:

«Այս ո՞վ ե կեղտոտել մեր դարպասը, — մտածեց նա: — Յերեկի փողոցի յերեխաներն են արել: Բայց վո՛չ, նշանը շատ բարձր ե նկարված: Սա մեծահասակ մարդ ե նկարել և նա մեր դեմ չար բան ե մտածում: Նա ուզում ե հիշել մեր տունը կողոպտելու և կամ սպանելու մտադրությամբ: Նրան պետք ե մոլորեցնել»:

Մարջանան հետ գնաց տուն, վերցրեց մի կտոր կավիճ և բոլոր հարեւան տների վրա խաչով նշան արավ, ապա գնաց շուկա իր գործին:

— Իսկ ավագակը շտապով հասավ քարայր և կանչեց.

— Լսի՛ր, առաջնորդ, լսեցեք և դուք բոլորդ: Յես դուք մեր թշնամու տունը, և խաչով նշան արի: Վաղը ձեզ ցույց կտամ:

— Կեցցե՛ս, Գլուխ-թոցնող Ահմադ, — ասաց առաջնորդը: Վաղն առավոտյան բոլորդ պատրաստ յեղեք: Խալաթների տակ կթագցնենք սուր գանակներ և Ահմադի հետ կգնանք մեր թշնամու տան վրա:

— Լսում ե հնագանդվում ենք քեզ, մեր առաջնորդ, — ասացին ավագակները և բոլորն ել տեղներից

բարձրացան չնորհավորելու Ահմադին իր հաջողությունների համար:

Ահմադը քայլում եր հպարտ-հպարտ և խոսում:

— Ահա՛, կտեսնեք, կլինեմ առաջնորդի ոգնականը:

Ամբողջ գեշերը նա չքնեց, սպասելով լուսաբացին: Հենց վոր քիչ լուսացավ, վեր ցատկեց և զարթեցրեց ավազակներին, նրանք հագան բուխարացու լայն խալաթներ, փաթաթեցին սպիտակ շալմաներ, հագան կեռ քթերով կոչիկներ և գնացին քաղաք: Յեվ նրանց տեսնողները բոլորն ել ասում եյին.

— Սրանք բուխարացիներ են, մեր քաղաքը տեսնելու յեկել:

Բոլորի առջևից առաջնորդի հետ գնում եր Ահմադը: Ահմադն իր ընկերներին քաղաքում յերկար պարտեցրեց և, վերջապես, գտավ հարկավոր փողոցը:

— Նայեցեք, — ասաց նա, — ահա՛ այն տունը: Տեսնո՞մ եք դարպասի վրայի խաչը:

— Ահա և մի այլ խաչ, — ասաց մյուս ավագակը: Իսկ վո՞ր տանն ե ապրում մեր թշնամին:

— Ահա և այն տան վրա խաչ կա: Յեվ այս մեկի վրա կա: Այստեղ ել կա: Սրանց բոլորի դոներին ել խաչ կա, — հանկարծ բացականչեցին մնացած ավագակները:

Առաջնորդը բարկացավ և ասաց.

— Այս ի՞նչ ե նշանակում: Ահմադ, մեկն իր խորամանկությամբ քեզ մոլորեցրել ե: Դուչես կատարել քեզ տված հանձնալարությունը, դու այլևս մեղ հետ ավագակություն անել չես կարող: Յես ինքս քո գլուխը կկտրեմ:

Յեվ յերբ վերապարձան անտառ, դաժան ավագակակետը կտրեց Ահմադի գլուխը: Յեվ ապա ասաց.

— Ել ո՞վ հանձն կառնի գտնել մեր թշնամու տունը: Ո՞վ այդքան քաջություն կունենա: Թող չփորձի, այդ անելու ծույլը, կամ թույլը:

— Ո՞վ առաջնորդ, թույլ տուր յես փորձեմ, — առաց ավազակներից մեկը, վորին Քաչալ-Մուհամեդ ե-յին կոչում: — Յես հասակով մարդ եմ և ինձ այնքան ել հեշտ չե մոլորեցնելը: Իսկ յեթե յես չկարողանամ կատարել քո հանձնարարությունը, սպանիր ինձ այնպես, ինչպես սպանեցիր Ահմադին:

— Գնա՛, Մուհամեդ, — ասաց ավազակապետը: — Քեզ կսպասեմ վաղը յերեկոյան: Բայց տես, յեթե դու չգտնես և ցույց չտաս մեր թշնամու տունը, քեզ փրկություն չկա:

Հետեւալ առավոտը Քաչալ-Մուհամեդը գնաց քաղաք: Ահմադն ավազակներին պատմել եր Մուստաֆայի մասին, ուստի Մուհամեդն ուղիղ գնաց շուկա, ծերումի Մուստաֆայի մոտ: Նա Մուստաֆայի հետ ունեցավ նույն խոսակցությունները, ինչ Ահմադը և նրան խոստացավ յերկու դինար, յեթե Մուստաֆան իրեն ցույց տա սպանված վաճառականի տունը: Յեվ Մուստաֆան խոստացած ընծայից ուրախացած տարավ նրան և ցույց տվեց Ալի-Բաբայի տունը:

«Ինձ ևս հարկավոր ե վորեւ նշան անել տանը», մտածեց Մուհամեդը: Նա վերցրեց ճանապարհին ընկած աղյուսի կտորը և նրանով դարպասի վերևի աջ անկյունում փոքրիկ խաչ նկարեց:

«Այստեղ նշանն ինձնից բացի վոչ վոք չի նկատի, — մտածեց նա: — Կվազեմ առաջնորդի հետեւից և նրան կբերեմ այստեղ»:

Յեվ նա շտապով հետ գնաց իր ընկերների մոտ: Իսկ Մարջանան հենց բարձր ժամանակ վերադառնում եր շուկայից: Տեսնելով, վոր իրենց դարպասի մոտից մի մարդ գաղտագողի հեռացավ և ճանապարհով վազեց, նա գլխի ընկավ, վոր այստեղ վատ բան կա:

Մարջանան մոտեցավ դարպասին, ուշադրությամբ նայեց և վերևի աջ անկյունում փոքրիկ խաչ նկատեց: «Ահա՛, թե ո՛վ ե մեր դարպասին խաչ զնում, — մտածեց Մարջանան: Սպասիր՝ թե ինչպես յես քեզ կմոլորեցնեմ: Այ, այժմ փորձիր գտնել մեր տունը, — բա-



Իսկ Մարջանան հենց այդ ժամանակ վերադառնում եր շուկայից...

ցականչեց նա: — Այդ քեզ կհաջողվի այնպես, ինչպես  
հաջողվեց յերեկ: Իսկ Քաջալ-Մուհամեդը ամբողջ  
ճանապարհն առանց կանդ առնելու վաղեց և վերջա-  
պես, հազիվ շունչ քաշելով, մտավ քարայր:

— Գնանք շուտով, — բացականչեց նա: Յես այն  
տունն այնպես եմ նշան արել, վոր այժմ մեր թշնա-  
մին մեր ձեռքից գուրս պղծնել չի կարող: Շուտ պատ-  
րաստվեք, մի՞ք դանդաղի:

Ավազակները փաթաթվեցին խալաթների մեջ և  
դնացին Մուհամեդի հետեւից: Նրանք շատ եյին ըշ-  
տապում, ուզում եյին մինչև մթնելը քաղաք հասնել  
և ուղիղ արևմուտին քաղաք մտան: Գտնելով ծա-  
նոթ փողոցը, Քաջալ-Մուհամեդն առաջնորդին  
կանգնեցրեց ամենամեծ և գեղեցիկ դարպասի մոտ և  
ցույց տվավ վերեկի աջ անկյունի փոքրիկ կարմիր խա-  
չը:

— Տեսնո՞ւմ եք, — ասաց նա, — ահա իմ նշանը:

— Իսկ այս ո՞ւմն ե, — հարցրեց ավազակներից  
մեկը, վորը կանդ եր առել հարևան դարպասի մոտ:  
— Այստեղ նույնպես խաչ ե նկարված:

— Ի՞նչ խաչ, — ճշաց Մուհամեդը:

— Կարմիր, — պատասխանեց ավազակը: Յեզ  
կան նկարված մյուս դարպասներին: Նույնպես դիմացի  
դարպասի վրա կա նկարված: Յերբ դու ցույց եյիր  
տալիս առաջնորդին քո նկարած խաչը, յես նայեցի  
բոլոր հարևան դարպասները:

— Մուհամեդ, — ասաց առաջնորդը, — քեզ նույն-  
պես խաբել են: Թեև դու լավ ավազակ ես, բայց քեզ  
տրված հանձնարաբությունը չես կատարել: Դու վըր-  
կություն չունես:

Յեզ Մուհամեդը նույնպես դիմատվեց, ինչպես  
դիմատվել եր Ահմադը: Յեզ հրոսակախմբում մնաց  
յերեսունութ ավազակ:

«Հարկավոր ե, վոր յես անձամբ զբաղվեմ այս  
դժվարին գործով, — մտածեց առաջնորդը: — Իմ մար-  
դիկ լավ կովող են, գիտեն գողանալ և կողոպտել,

բայց խորամանկությունների և խաբելու համար պետ-  
քական չեն»:

Յեզ ահա, հաջորդ առավոտը, Հասան-Միաչքա-  
նին՝ ավազակների պետը, քաղաք-մտավ ինքը: Նա  
շուկա հասավ կեսորին, գտավ մաշկակար Մուստա-  
ֆային՝ և նստելով նրա մոտ՝ ասաց.

— Ո՞հ, քեռի, ինչո՞ւ դու այդպես տխուր ես: Աշ-  
խատանքդ ե քիչ, թե՞ ինչ ե:

— Վաղուց ե, ի՞նչ աշխատանք չունեմ, — պա-  
տասխանեց մաշկակարը: Գուցե յես քաղցից մեռած  
լինելի, յեթե բախտն ինձ ոգնության չհասներ: Նախ-  
անցյալ որն ինձ մոտ յեկավ մի առատաձեռն մարդ և  
պատմեց, վոր ինքը վնարում ե իր յեղբոր ազգական-  
ներին: Իսկ յես գիտելի, թե վորտեղ ե ապրում նրա  
յեղբայրը և ցույց տվի ճանապարհը: Ոտարականը  
ամբողջ յերկու դիմար նվիրեց ինձ: Յերեկ ինձ մոտ  
յեկավ մի ուրիշ ոտարական և հարցրեց, թե արդյո՞ք  
յես չեմ ճանաչում նորերս մահացած իր յեղբորը:  
Յեզ յես նրան տարա այդ նույն տան մոտ և նորից  
յերկու դիմար ստացա: Իսկ այսոր, յերբ արդեն որը  
կես ե յեղել, դեռ վոչ վոք ինձ մոտ չի յեկել: Յերեւում  
և հանգուցյալն այլևս յեղբայրներ չունի:

Լսելով Մուստաֆայի խռովերը, ավազակապետը  
շառնորեն լացեց և ասաց.

— Ի՞նչ բախտավորություն, վոր յես քեզ հանդի-  
պեցի: Յես այդ սպանվածի յերրորդ յեղբայրն եմ:  
Յես յեկել եմ Հեռավոր Արևմուտքից և միայն յերեկ  
իմացա, վոր իմ թանկագին յեղբորն սպանել են:  
Մենք չորս յեղբայր եյինք և մեզնից ամեն մեկն առ-  
ըռում եր տարբեր յերկրներում. և ահա մենք ըռըրս  
հավաքվել ենք ձեր քաղաքում, բայց, միայն մեր յեղ-  
բայրը մեռած ենք գտնում: Տար ինձ նրա տան մոտ և  
յես քեզ կվարձատրեմ այնպես, ինչպես վարձատրել են  
մյուս յեղբայրներս:

— Լավ, — ուրախ ասաց ծերունին: — Իսկ ել ուրիշ  
յեղբայրներ չունի՞ն նա:

— Վո՛չ, — ծանր հառաչելով պատասխանեց առաջնորդը: — Մենք չուս յեղբայր ենք յեղել, այժմ յերեքն ենք մնացել:

— Շատ ափսոս, վոր դուք այդքան քիչվոր եք, — ասաց Մուստաֆան նույնպես հոգոց հանելով: — Գընա՛նք:

Նա առաջնորդին տարավ Ղասիմի տան մոտ, ստացավ իր վարձը և վերադարձավ: Իսկ առաջնորդը հաշվեց և հիշողության մեջ լսվ պահեց, թե փողոցի անկյունից մինչև այդ տունը, քանի՞ դարպաս կա, այնպես վոր, նրան պետք չեր դարպասի վրա նշան դնել: Ապա նա վերադարձավ իր ընկերների մոտ և ասաց.

— Ո՛վ ավագակներ, յես մի խորամանկություն եմ արել: Յեթե այդ ինձ հաջողվի, մենք կսպանենք մեր թշնամուն և հետ կվերցնենք այն բոլոր հարստությունը, վոր նա տարել և քարայրից: Հսեցեք ինձ և կատարեցեք այն բոլորը, ինչ յես կհրամայեմ ձեզ:

Յեվ նա ավագակներից մեկին կարգադրեց գնայ քաղաք և գնել քսան ուժեղ ջորի և քառասուն կարառ յուղի համար:

Յեվ յերբ ավագակը չորիները բերեց բեռնվաճ կարասներով, առաջնորդը հրամայեց ավագակներին մտնել կարասները և թագնվել նրանցում: Նա կարասների յերեսները ծածկեց արմավենու տերեներով և խոտով կապելով, վերեից ել ծակ բացեց, վորպեսզի մարդիկ ողի պակասությունից չխեղդվեն: Իսկ մնացած յերկու կարասներն ել լցրեց ձիթապտուղի յուղով և մյուս կարասներն ել շաղախեց նույն յուղով, վորպեսզի մարդիկ կարծեն, թե բոլոր կարասները յուղով են լիքը:

Առաջնորդն ինքը հագավ հարուստ վաճառականի հագուստ և ջորիները քշեց քաղաք:

Վրա հասավ յերեկոն: Արդեն մթնել եր: Ավագակապետն ուղիղ գնաց Ղասիմի տունը և տեսավ՝ դարպասի մոտ նստած մի ուրախ և սիրալիր մարդու: Այդ

Ալի-Բաբան եր: Առաջնորդը մոտեցավ նրան, խոնարհ բարեւեց՝ ձեռքը գետնին քսելով:

— Բարի յերեկո, պատվավոր առեւտրական, — ասաց նա: — Յես ոտարական եմ, հեռու յերկրից յեկած: Բերել եմ թանկագին յուղ, հուսալով, վոր ձեր քաղաքում կվաճառեմ: Բայց յերկար ճանապարհից իմ ջորիները հոգնել և դանդաղ եյին ընթանում: Յերբ յես քաղաք մտա, արդեն յերեկո յերևոր խանութները փակ եյին: Յես պտտեցի ամբողջ քաղաքը, վորոնելով մի տեղ, ուր կարելի կլինի գիշերել, բայց վոչ վոք չուղեց իր մոտ ընդունել ոտարականին: Յեվ ահա, յես անցնում եյի ձեր մոտից ու նկատեցի, վոր դուք սիրալիր և ուրախ մարդ եք: Թույլ կտա՞ք ինձ մի գիշեր ձեզ մոտ անցկացնեմ: Յես իմ կարասները կղարսեմ բակում, իսկ առավոտը կտանեմ շուկա և կվաճառեմ: Յեվ ապա յես հետ կղնամ իմ հայրենիքը և բոլորին կպատժեմ ձեր բարության մասին:

— Ներս մտիր, ոտարական, — ասաց Ալի-Բաբան: — Ինձ մոտ տեղ շատ կա: Զորիների համետները վերցրու և նրանց կեր տուր, իսկ հետո մենք կընթրենք: Ե՛յ, Մարջանա, կապիր չներին, վորպեսզի չկծեն մեր հյուրին:

— Ճնորհակալ եմ քեզնից, ո՛վ պատվավոր առեւտրական, — ասաց առաջնորդը: — Թո՛ղ քո ցանկությունները կատարվեն այնպես, ինչպես դու կատարեցիր իմ խնդիրը:

Նա իր ջորիներին տարավ բակ, տան պատի մոտ բեռնաթափ արավ՝ զդուշությամբ իջեցնելով կարասները, վորպեսզի ավագակները չվնասվեն: Յեվ ապա հակվեց կարասների վրա և փսփսաց.

— Նստեցե՞ք հանդարտ և չչարժեվեք. գիշերը յես կդամ ձեզ մոտ և ինքս ձեզ տուն կառաջնորդեմ:

Յեվ ավագակները կարասների միջից չչուկով պատասխանեցին.

— Լուսմ և հնագանդվում ենք, մեր առաջնորդին: Առաջնորդը ներս մտավ տուն և բարձրացավ այն

սենյակը, ուր արդեն պատրաստել եյին ընթրիքի սեղանը: Ալի-Բաբան նստած եր գորզով պատած ցածրիկ աթոռի վրա և սպասում եր նրան:

Տեսնելով հյուրին, նա կանչեց.

— Ե՛յ, Մարջանա, հրամայիր՝ ճուտ տապակեն, և պատրաստեն մեղրով գաթաներ: Յես ցանկանում եմ, վոր մեր հյուրը մեր հյուրասիրությունից գոհ մնա:

— Լսում և հնազանդվում եմ,— ասաց Մարջանան: — Այդ բոլորը յես ինքս իմ ձեռքով կպատրաստեմ:

Նա վազեց խոհանոց, շտապով խմոր հունցեց և հենց ուղում եր տապակել, յերբ հանկարծ նկատեց, վոր յեղած յուղը բոլորը սպառվել ե և տապակելու համար վոչինչ չկա:

— Ե՛յ քեզ պատուհաս,— բացականչեց Մարջանան: — Ապա ի՞նչ անել: Արդեն դիշեր ե, վոչ մի տեղ յուղ գտնել չես կարող: Չես ճարի և հարեւանների մոտ, վաղուց բոլորը քնած են: Ե՛յ քեզ պատուհաս:

Հանկարծ նա խփեց ճակատին և ասաց.

— Հիմար եմ, ախ եմ քաշում, թե յուղ չկա այն ինչ այստեղ, պատուհանի տակ յուղով լիքը քառասուն կարաս և դրված:

Յես մի քիչ կվերցնեմ մեր հյուրից, իսկ վաղը հենց լուսանա՝ շուկայում յուղ կղնեմ և կածեմ կարասը:

Նա վառեց ճրագը և դուրս յեկավ բակ: Գիշերը ժութ եր, ամպամած: Ամեն ինչ խաղաղ եր, միայն ջրհորի մոտ ջորիներն եյին փինչացնում և զընգզնգացնում յերասանակները: Մարջանան գլխի վերել ճրագը բարձր պահած, մոտեցավ կարասներին: Յեզ այնպիս պատահեց, վոր մոտիկ գտնվող կարասը հենց յուղով եր լիքը: Մարջանան բաց արավ կարասը և սկսեց յուղ ածել իր կճուճը:

Ավազակներն արդեն շատ եյին հոգնել կուչ յեկած նստելուց: Նրանց վոսկորներն այնքան շատ եյին ցավել, վոր այլևս համբերություն չեր մնացել: Լսելով Մարջանայի վատնաձայնը, նրանք կարծեցին, թե այդ

առաջնորդն է իրենց հետևից յեկել և նրանցից մեկն ասաց:

— Վերջապես դու յեկար, առաջնորդ: Շուտ ուր, թույլ տուր մեզ դուրս գալ այս անիծված կարասներից և հրամայիր անել մեր թշնամուղատաստանը:

Մարջանան կարասի միջից ձեն լսելով, վախից քիչ մնաց ընկնի և ձեռքից ճրագը դցեց: Բայց նա խելոք և քաջասիրտ աղջիկ եր և անմիջապես ըմբռնեց, վոր յուղավաճառը չարագործ ե և ավագակ, իսկ կարասների մեջ նստած են նրա մարդիկ և վոր Ալի-Բաբային ոռոկալի մահ և սպառնում:

Նա մոտեցավ այն կարասին, վորի միջից խոսեց ավազակը և կոշտ ձայնով ասաց.

— Շուտով կգա ժամանակը: Իոիր, թե չե ձենք կլսեն չները: Նրանց գիշերն արձակել են:

Ապա նա մոտեցավ մյուս կարասին:

— Այստեղ ո՞վ ե:

— Յես եմ՝ Հասանը, — կարասից պատասխանեց ձայնը:

— Հասան, պատրաստ յեղիր, շուտով քեզ կազատեմ:

Այսպես մեկ առ մեկ մոտեցավ բոլոր կարասներին, իմացավ, վոր յերեսունութ կարասի մեջ յերեսունութ ավագակ կա և միայն յերկու կարասի մեջ յուղ և ածված: Մարջանան համբշտակեց յուղի կճույղ և ածված: Վազեց խոհանոց և յուղը կրակի վրա այնքան տաքացրեց, վոր սկսեց յեռալ:

Այն ժամանակ նա յեռացող յուղը լցրեց այն կարասներից մեկի մեջ վորտեղ ավագակ եր նստած: Նրա մեջ յեղած ավագակը նույնիսկ ձայն չկարողացավ հանել և անմիջապես յուղից այրվելով մեռավ: Այդ մեկի հետ հաշիվը վերջացնելով՝ Մարջանան անցավ մյուսին: Նա յուղը յեռացնում եր և լցնում ավազակների վրա, մինչև վոր բոլորին սպանեց: Ապա վերցրեց կավագառակը և բավական շատ կարմիր-կարմիր կանդակներ բռվեց: Այդ բոլորը գեղեցիկ դասավորեց,

յուղ ածեց վրան և տարավ վերև, այն սենյակը, վորունակ նստած ելին Ալի-Բաբանուն նրա հյուրը։ Ալի-Բաբան չեր դադարում ավագակապետին հյուրասիրել և շուտով նա այնքան կերավ, վոր հազիվ եր կարողանում շարժվել։ Նա պառկած եր բարձերի վրա, ձեռքերը փորին դրած և ծանր շունչ եր քաշում։ Ալի-Բաբան տեսնելով, վոր հյուրը կուշտ ե, նրան ուրախացնել ցանկացավ։ Նա բարձրածայն կանչեց Մարջանային.

— Ե՞ս, Մարջանա, մեր հյուրի համար պարիր քո ամենալավ պարը։

— Տեր, լսում և հնագանդվում եմ, — պատասխանեց Մարջանան՝ խոնարհվելով։ — Միայն թույլ տուր զնալ վերցնելու քողս, յես պետք ե պարեմ քողով։

— Գնա և վերադարձիր, — ասաց Ալի-Բաբան։

Մարջանան վագեց իր սենյակը, փաթաթվեց ծաղկանկար քողի մեջ և նրա տակ թագցնելով սուր դաշույն, վերադարձավ և սկսեց պարել։

Ալի-Բաբան և ավագակապետը նայում ելին նրան և բավականությունից գլուխները շարժում։

Յեվ ահա, Մարջանան պարի կեսին, ամբողջությամբ փաթաթվեց քողի մեջ և ավելի ու ավելի մոռացալ ավագակապետին։ Յեվ հանկարծ նա, կատվի ճարպկությամբ թռավ նրա վրա և դաշույնն ողի մեջ չողացնելով այն խրեց ավագակապետի սիրտը։ Ամազակը բարձր ճշաց և մեռավ։ Ալի-Բաբան վախից քարկտրեց, նա մտածեց թե Մարջանան խելադարվել ե։

— Ո՛, դժբախտություն, — բղավեց նա, — ի՞նչ արիր դու, խելագար։ Տանս մեջ ոտարական սպանեցիր։ Ամոթ և խայտառակություն իմ դւխին։

Մարջանան չոգեց և ասաց.

— Խիր ինձ, տեր, ատա ինձ հետ վարվիր այնպես, ինչպես կուզես։ Յեթե յես մեղավոր եմ. սպանեցին այնպես, ինչպես յես նրան սպանեցի։

Յեվ նա Ալի-Բաբային պատմեց, թե ինչպես ե ինքն իմացել ավագակների մասին և թե ինչպես ե նրանց բոլորին սպանել։ Ալի-Բաբան խկույն հասկացավ.

վոր դրանք այն ավագակներն են, վորոնք սպանել են Ղաղիմին։ Նա տեղից բարձրացրեց Մարջանային և բարձր կանչեց.

— Զարթնիր, Զեյնար և զարթեցրու Յաթմային։ Մեղ սարսապիկելի մահ է սպաննացել, բայց այս հանդուգն և կմելոք աղջիկը բոլորիս փրկեց։ Զեյնարը և Յաթման խկույն վագեցին նրա մոտ և ամուր դրկեցին Մարջանային, իսկ Ալի-Բաբան ասաց.

— Մարջանա, զու այլես մեր տան ծառայողը չես։ Այսորվանից դու մեղ հետ կապես, վորպես մեր հարազատ քույթը։

Յեվ այդ որից նրանք մինչեւ իրենց մահը՝ ապրեցին միասին հանգիստ և բախտավոր։

15

Հեղվական խմբագիր՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլամիւտի լիազոր Դ— 4666. Հքառ. 4391

Պատվեր 33. Տիրաժ 5000

Թուղթ 62×94. Տպագր. 2 մամ.

Ե Էկ մամ. 24,480 նշան. Հեղինակ. 1 մամ.

Հանձնված և արտադրության 23 հոկտեմբերի 1937 թ.

Սառարարված և ապագրության համար 23 ապրիլի 1938 թ.

Պետհրատի 1 ապարան, Յերևան. Լենինի 65

34

Աղմակած խոշոշի Հ. Հայոց  
Տիգրան Խոշոշի Գրադարան  
Եղանակ Եղանակ

ՀՊ12

Աղմակած աշխարհ Հայոց Հայոց  
Տիգրան Խ. Տիգրան Խ.  
Տիգրան Խ. Տիգրան Խ.  
Եղանակ Եղանակ Եղանակ  
Տիգրան Խ. Տիգրան Խ. Տիգրան Խ.  
Եղանակ Եղանակ Եղանակ Եղանակ  
Եղանակ Եղանակ Եղանակ Եղանակ

ՀՀ Ազգային գրադարան



NL0400773

13720